ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2014 թվականի N 85– Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ-ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով «Գյումրի-Կենտրոն» համատիրության բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով «Գյումրի-Կենտրոն» համատիրության կառավարման մարմնի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2014 թվականի ապրիլի 30-ին թիվ 4432 թվագրմամբ) **համայնքի ավագանին որոշում է.**

1. «Գյումրի-Կենտրոն» համատիրության սպասարկման տարածքում գտնվող բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար տրամադրել սուբսիդիա 15.000.000 (տասնհինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին՝ գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 6/1/1 գործառական դասակարգման (4521) «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____